ներ, վանքեր և կիսակործան տաճարների փլատակներ և սրբավայրերի հետքեր. որպիսիք են՝ ս. Եղիշէի առաքելոյ վանքը, որ գտնւում է Նուխու հիւսիսային արևմտեան կողմը 7—8 վերստ հեռաւորութեամբ, հէնց մահմեդականացած Գիս (Քիշ) գիւղի մօտ։ Թէ Գիս գիւղի և թէ շրջակայքում թրքացած Հայերը շատ երկիւղածութեամբ և խորին յարգանքով են վերաբերւում դէպի այս հնադարեան սրբավայրը։ Ծօնի օրը քրիստոնեայ Հայերի պէս նրանք էլ ուխտ են գնում, մատաղ են անում և պատկառանքով նեղս մտնելով՝ մոմ են վառում և ջերմ սրտանց աղօթում են իրենց մտքում։ Մինչև անգամ շատ տեղերում, մահմեդականացած Հայերը երդւում են ս. Եղիշէի անունով։

Զայդխոը թրքացած մի գիւղ է, գտնւում է Նուխի քաղաքի և Օրբարան թրքացած գիւղի միջև։ Այս Զայդխո գիւղի վերև գեղեցիկ մի սարահարթի գլխին, մինչև ցարդ կանգուն մնացել է ս. Գէորգ անունով խաչաձև, քարաշէն մի սիրուն եկեղեցի, որին թրքացած Հայ գիւղացիք վերաբերւում են մեծ յարգանքով և խորին երկիւղածութեամբ։ Ահա, այսպէս, թրքացած գիւղերից շատերի մէջ կան կիսակործան տաճարներ, Հայոց գերեզմանոցներ, Հայ արձանագրութեամբ լի տապանաքարեր և խաչքարեր, որոնց մի առ մի յիշելը մեզ շատ ու շատ հեռու կը տանէր։ Այսքան միայն կարելի է ասել, որ մահմեդականութիւն ընդունած գիւղացիների մէջ, մինչև ցարդ անփոփոխ և անկորուստ պահպանուել